# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ
## ԵԶՆԿԱՅ ՆՈՐԱԳԻՒՏ ՁԵՌԱԳՐԻՆ

կազմեցին

Գ. Տ. ՄԿՐՏՉԵԱՆ եւ Հ. Յ. ԱՃԱՌԵԱՆ

### ՅԱՌԱՋԱԲԱՆ

Էջմիածին եղած ժամանակս, դեռ 1900ին՝ ինչպէս այլուր յիշած եմ (տես Բանասէր, 1902, էջ 218), նպատակ էի ունեցած կազմել հայերէն տաղերու եւ գանձերու լիակատար հաւաքածոյ մը. նիւթ հաւաքելու համար չվստահելով գտնուած թերակատար ցանկերուն վրայ, սկսած էի մի առ մի պրպտել ձեռագրատան բոլոր ձեռագիրները՝ սկսելով Կարենեան ցուցակի 1 թիւէն եւ յառաջանալով յաջորդաբար: 1902 թուականի գարնան արդէն հազար ձեռագիր անցած էի. երեկոյ մը Միաբան Գալուստ Տէր Մկրտչեանի քով գտնուելով, խօսք բացուեցաւ Եզնիկի կորսուած ձեռագրին վրայ. Միաբանը կասկած յայտնեց թէ Կարենեան թիւ 1111 եւ ուրիշ թիւ ձեռագիր մը (որ այժմ մոռցած եմ) Եզնկայ անունը կը կրեն եւ հաւանականաբար Եզնկայ Ընդդէմ Աղանդոցն ըլլալու են. յանձնարարեց անպատճառ նայել այն երկու ձեռագրերը: Որովհետեւ շատ մօտեցած էի տրուած թուերուն եւ քանի մը օրէն արդէն նոյն ձեռագիրները պիտի տեսնէի, ուստի չուզեցի շտապել եւ կանխել. բայց այնու ամենայնիւ թուերը նշանակեցի՝ աւելի ուշադրութիւն դարձնելու համար:

Անցաւ մէկ երկու շաբաթ. ձեռագիրներու քննութիւնը առաջ կ՚երթար միշտ բնական կարգով. երեկոյ մը՝ ապրիլ 25, հինգշաբթի օրն էր, առջեւս շարուած խումբ մը ձեռագիրներու մէջէն մէկը բացի պատահաբար. աչքիս հետեւեալ տողերը հանդիպեցան. "Այսպիսի անհաւատ եւ դանդաչանաց քանից տխմարաց կարկատելոց...„ կարելի՞ է երեւակայել իմ զգացած ուրախութիւնս. Եզնիկն էր, 1111 թիւ ձեռագիրը, այն որ Միաբանը յանձնարարած էր նայիլ: Իսկոյն բացի միւս նշանակուած հատորը. դժբախտաբար կը պարունակէր միայն Եզնկայ եւ Արճանի հարցմունքը: Նոյն երեկոյ՝ հատորը տարի Միաբանին եւ անմիջապէս սկսանք աշխատութեան. յաջորդ օրը ձեռագրի գիւտը երկտողով մը ծանուցի Վիեննայի Միաբանութեան Գեր. Հ. Տաշեանին. "Հանդէս Ամսօրեայ„ հրատարակեց սոյն երկտողը (1902. յունիս. էջ 191), ուր կը խոստանայի "շատ շուտ„ հրատարակութեան տալ մեր աշխատութեան արդիւնքը:

Աշխատութիւնն այսպէս բաժնեցինք. Նախ երկուքս միասին պիտի կազմէինք ձեռագրի մանրամասն համեմատութիւնը տպագրի հետ. երկրորդ՝ ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը պիտի կատարէի ես միայն. իսկ երրորդ՝ Միաբանը պիտի տար իր մասնաւոր քննութեանց արդիւնքը, որով կ՚ապացուցանէր թէ յիշեալ նորագիւտ ձեռագիրը ո՛չ այլ ինչ է, բայց եթէ այն ձեռագիրը՝ որ իբր հիմք ծառայած է տպագրին եւ որ մինչեւ այժմ այրած կը համարուէր Զմիւռնիոյ մեծ հրդեհին մէջ: Յունիսին արդէն երկու մասերը վերջացած ու պատրաստ էին. կը մնար միայն երրորդը. որ յետաձգուեցաւ Միաբանի բացակայութեամբ: Իր վերադարձէն առաջ ինքս մեկնելով դէպ ի Շուշի, մեր յարաբերութեանց կապը աւելի թուլցաւ եւ հազիւ տարուոյս հոկտեմբերի վերջն էր որ Միաբանը ուղարկեց աշխատութիւնը՝ առանց երրորդ յօդուածին: Արդէն պատրաստ մասերուն վրայ աւելցնելով իմ կողմէս քանի մը նոր հատուածներ եւս, ամբողջը այժմ կը յանձնեմ հրատարակութեան:

Ըստ այսմ աշխատութիւնը կազմուած է հետեւեալ ձեւով.

Ա. Ձեռագրի նկարագրութիւնը.

Բ. Հանգամանք համեմատութեան ձեռագրին ընդ տպագրին.

Գ. Ձեռագրական տարբերութիւնք.

Դ. Քննութիւնք յիշեալ համեմատութեանց.

Ե. Ձեռագրական սրբագրութիւններ Եզնկայ մէջ.

Զ. Եզնկայ կորսուած մասերը:

Վերոյիշեալ վեց գլուխներէն հինգը ամբողջովին իմ աշխատութեանս արդիւնքն է, իսկ միայն երրորդ գլուխը "Ձեռագրական տարբերութիւնք„ կազմուած է իմ եւ Գ. Տէր Մկրտչեանի աշխատակցութեամբ:

Շուշի, 1903, Դեկտ. ՀՐԱՉԵԱՅ Յ. ԱՃԱՌԵԱՆ

## Ա.
## ՁԵՌԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Եզնկայ Նորագիւտ ձեռագիրը կը կրէ 1111 թիւը, Կարենեան ցուցակով 1091. առանց հաշուելու սկիզբը եւ վերջը դրուած մէկ մէկ թուղթ մագաղաթեայ պահպանակները՝ որոնք հին Աւետարանի մը մնացորդն են, ձեռագիրն ունի ընդ ամէնը 323 թուղթ, որոնք առաջ էջահամարներով նշանակուած չէին. Նոր ժամանակներս՝ երեւի Էջմիածնի ձեռագրատան ցուցակը կազմելու ժամանակ՝ մէկը մատիտով էջերը նշանակեր է. բայց առաջին թուղթը՝ որուն մէկ երեսը յիշատակարան մըն է եւ երկրորդ երեսը պարապ է, մոռցած է նշանակել. 1 էջահամարը դրուած է երկրորդ թուղթին վրայ եւ այսպէս կը շարունակուի. էջ 223 կրկնուած է, ուստի պէտք է հաշուել 223 եւ $223^{bis}$. ասկէ զատ էջ 282 փախցուած է, այնպէս որ $281^{րդ}$ թուղթին կը յաջորդէ 283. ըստ այսմ ձեռագիրը՝ թէեւ նշանակուած 322, բայց ճշդիւ կը կրէ 323 թուղթ: Առաջին գրիչը նշանակած է սակայն թերթերը՝ ստորին լուսանցքի վրայ ա, բ եւն. իւր մէկ թերթը ունի 12 թուղթ, ուրեմն 24 երես. ամբողջ ձեռագիրը ունի 27 թերթ, որոնք բոլորն ալ ամբողջ են, բացի ժա թերթէն, որուն վեցերորդ թուղթը կտրուած է եւ ունի 11 թուղթ, եւ ժգ

digitised by A.R.A.R.@

թերթէն՝ որ ունի միայն ինը թուղթ = 18 էջ. բայց որովհետեւ այս մասը զմեզ չի հետաքրքրեր, ուստի ասոր պականներուն վրայ մանրամասնութեանց չենք մտներ։ Սկիզբէն մէկ թուղթ եւ վերջէն երկու թուղթ, պահպանակներուն հետ միասին ընդ ամէնը հինգ թուղթ՝ դրուած են կազմելու ժամանակ։ Ասկէ զատ էջ 300 եւ 301, ինչպէս եւ էջ 304 եւ 305 իրար փոխանակած են, այնպէս որ պէտք է կարդալ այս կարգով 299, 301, 300, 302, 303, 305, 304, այս սխալմունքը անկասկած կազմողէն է։ Գալով 306բ—310բ էջերուն, ասոր վրայ տես վարի համեմատութիւնները։

Ձեռագրի մեծութիւնն է՝ 16·5 սմ. երկայնութիւն 13 սմ. լայնութիւն եւ 6·3 սմ. հաստութիւն. գրութիւնը միասին է, 13×9·5 սմ. մեծութեամբ եւ իւրաքանչիւր երեսը 19 տող, մօտաւորապէս 30—33 տառով, բոլորգիր սեւ թանաքով։ Նիւթն է բամբակի թուղթ, կազմը կաշեպատ փայտեայ։ Հանգամանք. լաւ եւ մաքուր պահուած է. ամբողջ ձեռագրին մէջ ոչ մի զարդ կամ պատկեր. վերնագիրները եւ սկզբնատառերը միայն պարզ կարմիր թանաքով՝ բոլորգիր գրութեամբ. էջ 6բ եւ 108բ կան մէկ Ա եւ մէկ Մ՝ բաւական մեծ եւ թեթեւ զարդերով։ Բայց ասոր հակառակ գրիչը շատ զգոյշ, շատ հոգատար եւ շատ խնամոտ գրիչ է. տառասխալ չկայ. պատահած սխալները մաքուր կերպով ջնջուած, քերուած եւ կամ սրբուած են. եւ ուղիղը՝ կամ լուսանցքի վրայ յատուկ նշանով եւ կամ աւելի յաճախ տողամէջերը նշանակուած է։ Բայց որովհետեւ այս ուղղութիւններն երկու տեսակ գրութիւն կը ներկայացնեն, մէկը հաստ եւ խոշոր՝ որ գրքին սովորական գրութիւնն է եւ միւսը մանր եւ բարակ, ուստի յաջորդ համեմատութեանց մէջ ամէն անգամ որոշեցինք գրութեան եղանակը. երբ "մանրատառ" կ'ըսուի՝ պէտք է հասկնալ երկրորդ տեսակի գրութիւնը. իսկ երբ "մանրատառ" չկայ կամ չենք որոշած թէ երկրորդական գրչէ մըն է սրբագրութիւնը՝ այն ժամանակ հասկնալու է առաջինը։

Բուն Եզնկայ մասին մէջ կարմրատառեր ունինք միայն երեք տեղ. առաջինը էջ 187բ՝ գրքին խորագիրը. "Երանելոյն Եզնկա Վարդապետի." Նաեւ "Յորժամ զանհրեւոյթէն" հատուածին առաջին գլխատառ յ-ն։ Այս խորագիրը երկրորդ բարակ (մանրատառ) գրիչը փոփոխեր է. նախ ջնջած է կ տառը, յետոյ Եզնկա բառին ծայրը կ մը, վրդպտի բառին ծայրը՝ միջակէտին վրայ ն մը եւ տակը՝ տողամէջն ալ "կողբացւոյ", բառն աւելցնելով՝ խորագիրը դարձուցած է "Երանելոյն եզնակ վարդապետին կողբացւոյ"։ Բայց այս յաւելումները սեւ թանաքով են.

Երկրորդ. էջ 195բ, տող 17—18, որ կը համապատասխանէ տպագրեալին 21 էջի 25րդ տողին, կարմրատառով է "Պատասխանի Ա.", այն է տպագրեալին մէջ "Պատասխանի. ա(րդարեւ)".

Երրորդ. էջ 294բ, տող 6—7, որ կը համապատասխանէ տպագրեալին 250 էջին 17-րդ. տողին, կարմրատառով է "Պատասխանի. Ա", այն է տպագրեալին մէջ "Պատասխանի, ա(րդարեւ)"։

Եզնկայ մասին մէջ՝ էջ 309բ, վերի լուսանցքը եւ առաջին չորս տողերը մուրով սեւցած են, բայց ոչ անընթեռնլի լինելու աստիճան։

Ամբողջ ձեռագրին մէջ դատարկ կը մնան միայն 1բ, 321բ, եւ 322ա—բ երեսները։ Վերջինս կրնանք իբր պահպանակ հաշուել։

Գրիչն է Լուսեր, որ ՉԻԹ = 1280 թուին, գրեր է Ներսէս վարդապետի եւ իւր աշակերտ Եսայիի համար. յետոյ (թուի Ներսէսի մահէն վերջը) Թովմա վարդապետ իւր աշակերտին հետ վերստին համեմատեր է ձեռագիրը եւ սխալները մանրատառ նշանակեր։ Երկրորդ Նորոգող մըն է տանուտէր Պօղոս՝ ՌՃԻ = 1671 թուին. իսկ վերջին ստացողներ են նախ ...ոս ոմն եւ յետոյ Յովհաննէս վարդապետ՝ որ նուէր է ստացած Զաքարիայէն։

Ձեռագրին բովանդակութիւնը հետեւեալն է.

Էջ 1ա՝ քիչ մը աղտոտած երեսին վրայ սա յիշատակարանը. "Զ. վերջի Նորոգել տուաւղ Տր տառիս բարեմիտ եւ անձաւէր տանուտէրն պաւղոսն որ ետ Նորոգել Տր տառս բարի յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողացն. հօրն. փիրուն. եւ մօրն օղիկին. եւ կողակցին. շաղոսկուն եւ որդուն աւետիսին եւ կողակցին խառամին. եւ որդուն մանուկին եւ եղբաւրն պօղոսին. նազարն. եւ կողակցին. թուրվանդին. եւ քուերցն գուլբէկուն եւ դստերացն. եւ ամ արեան մերձաւորացն. կենդանեաց եւ հանգուցելոցն։ եւ մեծ պապուն եզդան եւ կնջի յիշէցէք ի տր զբարէմիտ. տանուտէր պօղոս. որ արարչաւ բարուն նորոգեց զնմ գիրքս եւ եդ ի տուն (երեք բառ եղծեալ)ն անջինջ յիշատակ (մի բառ եղծեալ) թվ. ՌՃԻ.

digitised by A.R.A.R.@

Էջ 1բ՝ դատարկ է։

Էջ 1$^{bis}$ա—2բ «Յաճախապատում (Նախ «յառաջնում». երկրորդ գրիչ մը յետոյ սրբագրած) իւր արարչագործութեանց եւ իւր նահապետացն եւ իւր ալփափետացն եւ իւր կատակարանացն հնոց. ոն̃ եպիփան ասացեալ, Յաճախապատումն (ըստ վերինին) աւուր արար ած զվերին երկինս եւ զերկիր եւ զջուր... (վերջ 2բ) վնզի սահմանակիցք են երրաեցիքն փինիկեցոց աշխարհին.»

Վերջի տողիս տակ նոյն գրչով՝

Զմեղապարտս յիշեսջիք ի քս՝ աղաչեմ եւ զծնողսն իմ.

Էջ 3ա. Առաջաբան Թագաւորութեանց. վս (կարմրատառ) ի յերկուս գիրս զառ ի յեբրաեցւոց պատմութի բաժանելոյ. զի ԻԲ. նշանագրաւք...։

Էջ 4բ. Սրբոյն Եփրեմի խորին ասորոյ Մեկնութի Սամուէլի Ասացեալ. Գիրք սամուելի որ պատմեն զեղկանաէ... (կը հետեւի ցանկը, որուն վերջը՝ տարբեր գրով՝)

Էջ 6բ. Զպատահեալսդ այսմ մատենի աղաչեմ յիշել յաղաւթս զստացաւղ սորին զմեծ հռետորն ներսէս. նոյնպ եւ զնուաստ ոգիս եսայի հետեւող եւ աշակերտ նր առնն այ ներս չդի։ (Ասոր տակ կարմրատառ)՝

Էջ 6բ. Եւ ի սկիզբն բանից իւրոց Այսպէս ասաց։ Ա (այս ա-ը սեւ մեծ եւ զարդարուն)յր մի էր յարեմաթեայն սիփա (վարդագոյն) յեփրիմ լեռնէ. այսինքն... (վերջը էջ 37բ) որ ոչ մերկաց ըզսուսեր իւր ի վերա պարանոցի արքային։

Ասոր քով՝ Զմեղապարտս յիշեսջիք ի քս.

Եւ տակն իբր խորագիր՝ Ողբք դաւթի վս շաւուղի եւ յովնաթանու. Երկր. թագաւորութեցն։ Եւ արդ ողբս առեալ դաւթի լայր ըզշաւուղ... (վերջը էջ 60բ) արգելաւ մահն ի գառնացող ժողովրդենէ անտի. (ասոր քով նոյն գրչով) աւգնէ քս. (տակը իբր խորագիր)՝

Կատարեցաւ մեկնութի սամուելի։ մեկնիչ թագաւորութեանն. Դպրութի թագաւորաց. գրէ զամս կենաց... (էջ 61ա) եւ ի սկիզբն մատենագրութեննն իւրո այսպէս ասաց. (կարմրատառով՝) Եւ արքայն Դաւիթ ասէ...

Էջ 93ա. լուսանցքի վրայ բարակ գրչով «Զոր. թգուէք։»

Էջ 108բ. Կատարեցաւ մեկնութի թագաւորութեանն շնորհօքն այ. (տակն իբր խորագիր կարմրատառ՝) Մեկնութի դպրութե իբրամենու (եւ վարդագոյն՝ միայն առաջին Մ սեւ եւ մեծ զարդարուն՝) Մատենագիրն դպրութեան իբրամենու... (նոյն էջ ստորին լուսանցքի վրայ՝ բարակ գրչով՝)

Աւաղ եւ եղուկ է անգէտ գրագրին։ ահած հոգի. ինչ կառնես. գիտեմ բանական ես. զգիրս տողել ես եւ մէկիմէկ յինչ ես կցել. (Իմա թէ կուզէ դատապարտել առաջին գրիչը՝ որ առանց բաժանումներու՝ տարբեր գրքեր միայար կը գրէ).

Էջ 145ա այսպէս կը վերջանայ Մնացորդաց մեկնութիւնը՝ «Որպէս զի պղծեցին հարք նոցա զանուն իմ։» Ասոր տակ առաջին գրչէն՝

Շնորհաւք եւ ողորմութբն այ կատարեցի զտառս ծծաշունչ ես փցուն եւ ապիկար գրող լուսեր. ի վայելումն նր եւ ամենագով. չդն ներսէսի. աղաչեմ զդասս լուսերամից յիշել զքազմամեղ գրողիկս եւ զժառանկորդ գրիս զհռետոր զչդն եւ ած յիշողացդ ողորմեսցի. ի թուիս հայոց. չիթ գրեցաւ.

Ասոր տակ բարակ գրով՝

Ած ողորմի ներսէս վրժապետին եւ ինձ թվմա վդպիս որ զնարուեստ գիրս յաւարտ ածի. քս ած այն աշկտին ողմեսցի. որ նկն ինքն ընդ մեզ տանջի ամէն։

Էջ 145բ (կարմրատառ) Մեկնութի յեսա եւ դատաւ զոր արա ոն եփր ի տր. Յանձն եղեւ ժողովուրդն յեսուա... (սեւատառ են սկսեալ անձն-էն. վերջը՝ էջ 153բ՝) զի գուցէ թէ որպէս փոխանակեսցեն զնա.

Էջ 153բ՝ (կարմրատառ) Մեկնութի յեսուա եւ դատաւորացն զոր արարեալ է ծայրաքաղ ոն եղիշէի հայոց վարդապետի. աւգնէ քս. Կոչեցաւ յեսու նաւեանց ի տէ առաջնորդ... (սեւատառ սկսեալ ոչեցաւ-էն. մեկնութեան ընթացքին մէջ 12 կարմրատառ խորագրեր՝ այլեւայլ գլուխներու. վերջն է՝ էջ 187բ՝) եւ խաղ էղեւ նոցա նոյնպէս եւ ամենայն իէլ. աւրհնել է ած։

Հոս սկսուած է նաեւ Եզնիկը.

Էջ 187բ՝ Նրանելոյն եզնակ վարդապետին Կողբացւոյ. Յորժամ զաներեւոյթէն... (տես քիչ մը վերը քովը կայ զարդի ամենահասարակ ուրուագիծ մը)։

Եզնկայ ձեռագրին եւ Վենետկի տպագրին էջերու համեմատութիւնը հետեւեալն է.

digitised by A.R.A.R.@

Ձեռ. եւ Տպ. էջ տող.

187բ = 5
188ա = 6, 2 զեւ, զի մի.
բ = 7, 2 գոյանալ եկին.
189ա = 7, 26 -որին խնայի ...
բ = 8, 26 -խեն եւ ոչ ..
190ա = 9, 26 -բարբառ պատասա ...
բ = 10, 25 -ակամնիշք են.
191ա = 11, 25 զի որ շարժին.
բ = 12, 25 եւ ընդ մշտնջե ...
192ա = 13, 26 -նացն անշնչից.
բ = 14, 26 որ մերթ կոչի.
193ա = 15, 26 -եա, եւ յարժամ.
բ = 16, 26 աւագոյն պաշտօ ...
194ա = 17, 25 -ել են երբեմն.
բ = 18, 25 անպատշաճ.
195ա = 19, 25 -է ընդդէմ.
բ = 20, 25 այլ եւ խօսէ.
196ա = 22, 2 -մ որք աւագք.
բ = 23, 3 -ամարեցին զԱստ ...
197ա = 24, 5 -ւցանել կամեցաւ.
բ = 25, 9 -արին անօրէնութիւն
198ա = 26, 10 -ինօղքդ ոչ ի.
բ = 27, 10 թէ ոչ միայն.
199ա = 28, 13 եւ շարէքն ի.
բ = 29, 13 -ռաս շարեացն.
200ա = 30, 14 երեւեցին.
բ = 31, 15 զի նախ քան.
201ա = 32, 18 պէսպէս բնութ.
բ = 33, 18 ինչ ընդ միմեանս.
202ա = 34, 19 եւ ի Հոգիս.
բ = 35, 19 յիրաւի նմին.
203ա = 36, 20 շարաբարս.
բ = 37, 21 -ժամ պէտքն.
204ա = 38, 24 -ծն մատուցանիցէ.
բ = 40, 1 անձնիշխանութիւն.
205ա = 41, 1 զանձնիշխանութ.
բ = 42, 2 որով կարող.
206ա = 43, 3 -պար իսկ էր.
բ = 44, 4 ստուգաբանողին.
207ա = 45, 9 եւ ըստ նման.
բ = 46, 11 ուրուք թշնամի.
208ա = 47, 11 -արթ էր ստանալ.
բ = 48, 15 -պխոի իրաց.
209ա = 49, 19 -տարերեցէ, ոչ.
բ = 50, 24 եւ ոչ փորձիչ.
210ա = 52, 1 կամեցան եւ.
բ = 53, 4 եւ ի թշնամեա ...
211ա = 54, 8 անՀնազանդութիւն.
բ = 55, 11 իմանայցեն.
212ա = 56, 14 միջոյ երարձ.
բ = 57, 16 -թեան ընդ ախոյ ...
213ա = 58, 18 յայժմուն.
բ = 59, 21 այլ բնութ.
214ա = 60, 24 -ոք յայտ է.
բ = 61, 26 խրատ տայցէ.
215ա = 63, 2 երկիւղ ի միտս.
բ = 64, 4 Հեթանոս իցէ.
216ա = 65, 5 -ան անուցանէ.
բ = 66, 8 եթէ սիրտ.
217ա = 67, 10 -արձեալ կատե.
բ = 68, 13 միոյ միոյ.
218ա = 69, 13 -դկան զգաստ.
բ = 70, 16 -րցցուք եւ
219ա = 71, 18 թէ եւ ի.
բ = 72, 20 դէմ ստուգութ.

Ձեռ. եւ Տպ. էջ տող.

220ա — 73, 24 -ներ ի դրախտին.
բ — 75, 1 մաՀ ի վերայ.
221ա — 76, 4 եթէ կացեալ.
բ — 77, 6 եւ ոչ նա.
222ա — 78, 11 -ացաւ զգալ.
բ — 79, 13 տաւալի մարդոյն.
223ա — 80, 14 -երաքն Հարցին.
բ — 81, 16 նոյնպէս եւ.
bisա — 82, 19 դարձեալ թէ.
բ — 83, 20 Հաւատովք.
224ա — 84, 24 գեւ գդեւ.
բ — 86, 2 -ոք Հանէր.
225ա — 87, 2 -ներ եւ որբովք.
բ — 88, 5 իւրեանց եթէ.
226ա — 89, 7 -շակերտան եթէ.
բ — 90, 7 -խատնեալք այլ.
227ա — 91, 9 -ան եւ բնաւ.
բ — 92, 8 եւ վասն տա ...
228ա — 93, 13 -յա է թէ ուր.
բ — 94, 15 պատանիս իւր.
229ա — 95, 16 -զանօք յօդեալ.
բ — 96, 18 շօշափի կամ.
230ա — 97, 21 -կաց կամ Համր ...
բ — 98, 23 եւ զոյայն իմն,
231ա — 100, 1 -իզէն եւս ոք.
բ — 101, 4 ի կուսէ ծնանել.
232ա — 102, 7 գոյ որ կարիցէ.
բ — 103, 9 եւ ոչ տա տա.
233ա — 104, 11 -արեք ծովակունք.
բ — 105, 12 կենդանի կայ.
234ա — 106, 14 նոյնպէս եւ.
բ — 107, 16 յԱստուծոյ Հրամանէ.
235ա — 108, 18 -ն Հոգիք.
բ — 109, 21 բայց միայն.
236ա — 111, 1 որդիք ծնան.
բ — 113, 13 եւ յետ Հազար.
237ա — 114, 22 -տաւոր եւ անուշ ...
բ — 115, 25 այսպիսի անՀաւատ.
238ա — 117, 3 նոքա ամենայն.
բ — 118, 6 թերակատարութ.
239ա — 119, 11 Հազար ամ.
բ — 120, 15 քաղցր եւ միւսն.
240ա — 121, 19 -բաշքոյ կարգաց.
բ — 122, 22 -արան լուսաւորացն.
241ա — 123, 25 Հաւատայր թէ եւ.
բ — 125, 2 չար արարածս.
242ա — 126, 6 -ական եւ ձեաց.
բ — 127, 11 -ուց որդոց.
243ա — 128, 15 բարի էր.
բ — 129, 21 քան զնա եւ
244ա — 130, 25 լինելն եւ.
բ — 132, 5 յերկնանալ.
245ա — 133, 8 եւ ոչ բարւոյն.
բ — 134, 11 եւ զխարդ.
246ա — 135, 14 -դարեւ արդեւք.
բ — 136, 16 ապա եւ յղութ.
247ա — 137, 19 -այլ ապաստան.
բ — 138, 22 մտանէր եւ.
248ա — 139, 26 ոչ Հնարագիտ.
բ — 141, 2 նոցա դատաւոր.
249ա — 142, 4 -ւսաւորան որպէս.
բ — 143, 6 -եանք յարութեան.
250ա — 144, 11 ոչ զԱրՀմն.
բ — 145, 14 բարի եւ գեղեցիկ.
251ա — 146, 16 -նել փախստականք.

Ձեռ. եւ Տպ. էջ տող.

251բ — 147, 20 զի է ի նոցանէ.
252ա — 148, 24 եւ զմուկն.
բ — 150, 8 նախ փչեաց.
253ա — 151, 7 միմեանս. զի.
բ — 152, 12 ի խաւարն.
254ա — 153, 16 եւ ուստի բան.
բ — 154, 20 կենդանեաց.
255ա — 155, 23 -տեղատուութեան.
բ — 157, 1 արդ Հասարակաց.
256ա — 158, 4 -րդկանէ կազմեալ.
բ — 159, 8 եւ են Հարկաւոր.
257ա — 160, 13 ստորեստանեայցն.
բ — 161, 17 -եցաւ փառաւոր.
258ա — 162, 23 -անի կոտորածքն.
բ — 164, 3 գլորելոց է.
259ա — 165, 7 եւ զի ոչ անտ.
բ — 166, 13 -ով անասուն.
260ա — 167, 19 եւ ոչ Աստուած.
բ — 168, 24 -ովք բազմօք.
261ա — 170, 3 այլազգեաց.
բ — 171, 7 յաւիտենից.
262ա — 172, 12 էր, զի՞ պիտոյ էր.
բ — 173, 20 -արծոցն եւ.
263ա — 174 26 յամարանոյն.
բ — 176, 3 նշանակ.
264ա — 177, 6 -նական ազդեց ...
բ — 178, 10 յորդորելոյ.
265ա — 179, 13 -մա զան Աստուծոյ.
բ — 180, 19 եւ նա ստանէր.
266ա — 181, 25 -եղ իբրեւ.
բ — 183, 5 սուրբ ելեալ.
267ա — 184, 13 -մեցաւ ։ Եւ.
բ — 185, 19 տայց Մովսէս.
268ա — 186, 24 -արգել. ուստի.
բ — 188, 4 անշարժ.
269ա — 189, 10 ապարանիցն.
բ — 190, 15 Եւ յամենայն.
270ա — 191, 19 սան ի միջոցի.
բ — 192, 24 -ափ ծանրութիւն.
271ա — 194, 3 -անի ։ Եւ.
բ — 195, 8 օրՀնեցէք.
272ա — 196, 11 արարչին կոչի.
բ — 197, 16 վերոյ քան.
273ա — 199, 9 եւ արեգակն.
բ — 200, 20 զի յորժ կուսէ.
274ա — 201, 26 -ուէ աշխարՀ.
բ — 203, 6 -ութեանն.
275ա — 204, 11 -ել ։ Եւ ի.
բ — 205, 16 իբրեւ թէ.
276ա — 206, 20 -արգեալ Հաստանէր.
բ — 207, 24 -որութիւն էր.
277ա — 209, 7 ամենայն.
բ — 210, 11 -ին յանդուգն.
278ա — 211, 16 -անց ոչ.
բ — 212, 20 գնէ զձիւն.
279ա — 213, 25 յայտ է զի.
բ — 215, 4 ծովուց որոց.
280ա — 216, 9 -ամ յանձնութեան.
բ — 217, 17 լուսնի բարբանջին.
281ա — 218, 22 -ւնաց իմաստունքն.
բ — 219, 26 լուսաւորութեան.
282 փախցուած է.
283ա — 221, 4 -առ ամենայնի.
բ — 222, 8 զկարիս մարմնոցն.
284ա — 223, 12 մեռանիցին.

digitised by A.R.A.R.@

Ձեռ. էլ Տպ. էլ տող.
284բ — 224, 15 թէ որպէս.
285ա — 225, 21 միջոյ բառնալոց.
բ — 227, 1 -ուժ աստուածք.
286ա — 228, 7 -նելոյ արժանի.
բ — 229, 12 -ացեալ ըմբռնել...
287ա — 230, 20 -է թէ յամենայն.
բ — 232, 1 -այ խորհէի.
288ա — 233, 5 -ւրս եւ զհուր.
բ — 234, 8 հնարօղութեան.
289ա — 235, 11 ինչ, որ է.
բ — 236, 16 -արերարութիւնն.
290ա — 247, 21 ի բարերարութ.
բ — 239, 1 -աշխարհս.
291ա — 240, 10 -ստուէրքն Յունաց.
բ — 241, 17 զնա յաչաց.
292ա — 244, 8 առնել ի սմա.
բ — 245, 13 -նձն մեկնել.
293ա — 246, 18 -ողին զնա.
բ — 247, 23 -պյցէ դժոխակ.
294ա — 249, 3 -ու, արգ.
բ — 250, 6 թող զայլ.
295ա — 251, 12 -էր, գեթ.
բ — 252, 19 գարձեալ եւ.
296ա — 253, 23 որպէս թէ.
բ — 255, 4 որստատուչ.

Ձեռ. էլ Տպ. էլ տող.
297ա — 256, 8 -ստարակ արարին.
բ — 257, 13 զնենգաւոր եւ.
298ա — 258, 19 -եհեն, զնա.
բ — 259, 23 այլ նախ.
299ա — 261, 1 -ելով որ է.
բ — 262, 7 թէ իբրեւ.
300ա — 265, 22 -ի յայտ յանդիման.
բ — 267, 1 -ար զտուն.
301ա — 263, 11 -յլոց ընկերացն.
բ — 264, 17 պահապանքն.
302ա — 268, 6 կերպարանս եկն.
բ — 269, 10 յառաջ քան.
303ա — 270, 15 մեր յերան.
բ — 271, 19 -ու եւ անեղեկացու.
304ա — 275, 6 -նդանեայն.
բ — 276, 11 թէ որ հայր.
305ա — 272, 23 թէ արարից.
բ — 274, 2 -թեան արար.
306ա — 277, 15 զի զայոց երկուց.
բ — 278, 18 եւ ոչ ի գործ... (մինչեւ 279, 13 զոր ուսոյցն, որմէ յետոյ 281, 2 ապա եւ նոքա, մինչեւ 281, 9 ոսկերքն են, հար).
307ա — 281, 9 -կ է թէ մեղէն.
բ — 282, 13 թէպէտ եւ գոյ.

Ձեռ. էլ Տպ. էլ տող.
308ա — 283, 17 ախորժեն ուտել.
բ — 284, 22 առաջեալ թէ.
309ա — 285, 25 եթէ բանիւ.
բ — 287, 3 -ր սակս եւ
310ա — 288, 7 -սար հրեշտակաց... մինչեւ 289, 5 մի մեկնեսցէ, որմէ յետոյ 279, 13 Յեսու այնչափ առ աստուածս, մինչեւ 279, 19 վասն կերակրոց եւ ի)։
բ — 279, 20 հնումն եւ ի... (մինչեւ 280, 20 էր եւ ոչ գառն. որմէ յետոյ 289, 5 Արդ հաւատացելոց... մինչեւ 289, 9 եւ ապա թէ այր։ Իսկ 280, 20 քանզի Քրիստոս... մինչեւ 281, 2 առաւել է թէ հաղորդակցը էջոյ մէջ յետագրին մէջ)։
311ա — 289, 9 -ընտիր լինիցին.
բ — 290, 15 անմահ եւ սանձ...
312ա — 291, 20 եւ մահկանացուիս.
բ — 293, 1 եւ առաւել.
313ա — 294, 4 ումեք պարտ է.
բ — 295, 7 -զթին կրէ.
314ա — 296, 10 զփառաւորութիւն.
բ — 297, 13 իշխեաց յայլոց։

Եղնիկը կը վերջանայ 314բ էջին տողին հետ։ Յաջորդ էջը՝ 315ա՝ միեւնոյն գրչէն. Ո՜վ երամք աղաւնեաց ընթերցողք սրբոյ տառիս յիշեսջիք զկազմողս զգո՞ր։

Այսր տակ կը սկսի "Ի գատաւորաց մեկնութենէ" վերնագրով նոր հատուած մը՝ "Եւ յետ նորա յարեաւ սամեգար որդի անաթեա", վերջը՝ էջ 320բ "կոտորեցան նուազունքն որ մնացին ի հետս նոցա. եւ քի փառք յաւիտենս։ Զսակաւ աշխատողս յիշեա ի տր աղաչեմ։." Ամբողջ այս հատուածն ալ նոյն առաջին գրչէն է. թէեւ վերջին երեսներուն մէջ տառերը սկսած են հետզհետէ փոքրանալ՝ տեղի սղութեան պատճառաւ։

Էջ 331ա կայ երկու յիշատակագրութիւն. դժբախտաբար առաջինին ծայրէն թուղթը ուղղանկիւն եռանկիւնի ձեւով քերուած ըլլալով՝ շատ տողերու վերջը պակաս է. այսպէս՝

Ի հուսկ եւ ի վերջի... տեսանեմ զմ բարութի՝ եւ զբար ... մնդի հեղինակս եւ ի ժառանգաւորս եկղ...եալ եւ ծովացեալ մեղաց մերոց։ Ես տառատե ..., ոս՝ սիրող բանի եւ սպասաւոր. Ճանապարհ ոյ... ոյ ձոր. հանդիպեցայ ըստ նախատեսութեն այ. առ ... Ճգնաւորի միոջ որոյ անուն յակոբ յորջորջի իւր որ եւ ի ք... ի ծերպս վիմացն քողեալ մրվ որ եւ ուռճացեալ հոգով, հան... մահն քի յինքն բերելով. ըստ մրգէին թէ վն քո մեռանիմք զաւրհ... եւ ի հարկաւորացն՝ նայ եւ ի վանեշականոյն. նահանջեալ էր զինքն... արի կամօք եւ ճծաճգութ սիրով որ ունէր առ ած ընկալաւ զմեզ. եւ... զի ոչ գոլով մեր նիւթ վրդպութե որ են գիրք՝ զմատեանս զայս յաճախմտում (քերուածներով. նախ յառաջնում?) թագաւորութեց մեզ շնորհեաց. յիշատակ բարի՝ իւրն եւ ծնօղց իւրոց՝ եւ մեր ընկալեալ իբրեւ զաւրհութի եւ րպ. պատարագ եւ նուէր այ. որ հանդիպիք այսմ տառի՝ յիշեսջիք զառաջին երախտաւորք սորայ եւ զվերջին երախտաւորք սորայ՝ առաջի զենման, անմահ գառինն այ զգութ եւ զողորմութի հայցելով յայ նց եւ մեզ. եւ զյիշեցողսդ յիշէ՝ անմոռացն ած յարքայութի ամէն։

Երկրորդ յիշատակագրութիւնն է՝

Ես զաքարիա գնեցի զգիրքս ի հալալ եւ յարդար վաստակոց իմոց։ Եւ ետու յովհաննէս վարդապետին յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց ֆէրօսին եւ թա... խաթունին. արդ ով ոք հանդիպիք այս նբ տառիս յիշեցէք ի քն զիս եւ զծնօղսն իմ միշտ եւ հանապազ եւ ինքն քն ած զձեզ յիշէ յիւր արքայութին ամէն եղիցի եղիցի. ընդ նմին եւ զիս զանպիտանս որ զսակաւ գիրս գրեցի յիշեցէք։

Մնացեալ էջերը բոլորովին պարապ են։

Կը մնայ մեզ յիշել թէ բոլորովին նոր գրիչ մը սկսեալ էջ 226բ մինչեւ 265բ՝ լուսանցքի վրայ տեղ տեղ դրած է արաբական թուանշաններ, որոնք կը ցուցնեն Եղնկայ Զմիւռնիայի տպագրութեան համապատասխան էջերը։

digitised by A.R.A.R.@

Ստորեւ կը նշանակենք թէ ձեռագրի որ էջին որ տողին դէմ ինչ թուանշան գրուած է եւ թէ այդ տողը Վենետիկի տպագրին որ էջին որ տողին կը համապատասխանէ։

| Ձեռ. | | | Վեն. |
|---|---|---|---|
| 226բ, 2 | բայց եւ | 79 = | 90, 9 |
| 14 | -նն որպէս այլուր | 8[0] = | 90, 26 |
| 227ա, 17 | -ելոյ այլ գիտեմք | 81 = | 92, 4 |
| 228ա, 19 | -տուցեալ ի լերինն | 83 = | 94, 14 |
| 229ա, 2 | -ս քրոջէն ի միջո | 84 = | 95, 17 |
| 229բ, 1 | է եւ որ զգայնոց | 86 = | 96, 20 |
| 242բ, 18 | չէր եւ ոչ թագաւ . . . | 113 = | 128, 13 |
| 243ա, 18 | -ա վասն որդւոյն | 114 = | 129, 17 |
| 243բ, 4 | -հմնի եւ զնստա | 115 = | 129, 26 |
| 244ա, 1 | լինելն եւ տառուած | 116 = | 130, 25 |
| 250ա, 7 | -կ զխարամանս | 128 = | 144, 20 |
| 254ա, 13 | մի գեղեցիկ | 138 = | 154, 9 |
| 254բ, 9 | -եան որոց | 138 = | 155, 6 |
| 255բ, 1 | արդ. հասարակաց | 141 = | 157, 1 |
| 259ա, 13 | եւ յայտ է թէ | 149 = | 165, 26 |
| 264ա, 6 | ինչ ինչ բարի | 160 = | 177, 13 |
| 265բ, 3 | ոչ եթէ լուանամք | 164 = | 180, 23 |

Միեւնոյն գրիչը դարձեալ մի քանի էջերու ստորին լուսանցքներու վրայ նշանակած է մի քանի նոյնպիսի թուանշաններ եւ տեղեկութիւններ՝ հետեւեալ ձեւով.

Էջ 241բ գրուած է 44 թուղթ է.
» 257ա » մինչ վերջն ծէ թուղթ է.
» 279ա » 35.
» 285ա » 30.
» 291ա » 24.

Ասոնցմէ առաջինին նպատակը յայտնի չէ. միւսները կը նշանակեն բուն Եզնկայ մինչեւ վերջը մնացած թուղթերուն թիւը։

(Շարունակելի։)

## ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՒ Բ. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Սկիզբ առաւ վերստին Մ. Խորենացւոյ խնդիրը. այս անգամ եւս ի նպաստ մեր ալեւոր պատմագրին, եւ կը ջանացուի գահազուրկը միւսանգամ իւր գահը բարձրացընել։ Հետաքրքրական է այս անգամ եւս հրատարակեալ գրական պայքարին ելքն, որ, ինչպէս կը ցուցընեն ցայժմ ի մէջ բերուած տկար եւ անզօր ապացոյցք, առաջնէն տարբեր պիտի չվերջանայ անշուշտ, եւ պիտի համոզուինք, թէ այլ եւս ապարդիւն է եւ աւելորդ ջանք զԽորենացին Ե դար իջեցընելը։ «Հանդէս» շարք մը յօդուածներու տպեց հետզհետէ իւր թուերու մէջ, որոնցմով կը ջանար հայագէտն Կոնիբեր ի մէջ բերել Զ դարէն յիշատակարաններ, հաստատելու զԽորենացին Զ դարէն յառաջ 416 – 451ի մէջերը, որոնք սակայն ապացուցի ոյժ չունէին։ Ասոնցմէ քաջալերեալ Մեծ. Հ. Բ. Սարգիսեան հրապարակ իջնալով (ԲԶՄ. 1903 Թիւ 11, 12) ուզեց այս անգամ «յարձակողական» դիրքով պաշտպանել զԳահավէժն, իբրեւ զէնք առած ի ձեռին «Անանուն ժամանակագիրն» եւ զՍիմէոն. որոնցմով սակայն չենք կարծեր որ յաջողած ըլլայ հակառակորդները զինաթափ ընելու։ Հոս մեր նպատակը չէ մի առ մի ցրել Պրոֆ. Կոնիբերի եւ այլոց ապացոյցներն, այլ կ'ուզենք նախ պարզապէս համառօտիւ քանի մ'ապացոյցներ յառաջ բերել, որոնք կը գիտեն խորենեան ժամանակի խնդրոյն վրայ ամփոփ գաղափար մը տալ, որ կարեւոր է մեր վերնագրոյն դիւրըմբռնելիութեան համար, եւ երկրորդ՝ ցոյց տալ ոմանց թէ հարեւանցի «մետալի միւս կողմը» նայիլն ալ բաւական չէ, այլ հարկ է անաչառ եւ հետազօտիչ զննութեամբ կատարել քննութիւնը։

Ա. Այսօր որ եւ իցէ խնդրոյ տակ չի կրնար ձգուիլ Ե դարու հայերէն լեզուի նոյն դարուն նկարագրական ըլլալը. այս նկարագրական լեզուն տեւեց գրեթէ մինչեւ սոյն դարուն վերջը՝ թէեւ 460—70էն սկսեալ զգալի փոփոխութիւններով։ Զ դարն եւս ունի իւր յատուկ լեզուներն, զորոնք կրնանք կոչել ատոնք, այս ինքն այն որ առ հասարակ նամակներու եւ ինքնագիր գրութեանց մէջ կը գործածուէր, եւ թարգմանչական, որ է Հելլենաբանութիւն, յունարէնէ թարգմանողներու սեպհական։ Անհրաժեշտ հարկ է այս կրկին զանազանութիւնն, որ բացայայտ կը նշմարուի Զ դարու մատենագրաց վրայ։ Երբ մէկ կողմէն լեզուն ըստ բնական ընթացից ամէն լեզուի՝ փոքր փոքր կը խոնարհէր բարձրութենէն, միւս կողմանէ յունասէրք հելլենական գրոց թարգմանութեամբ կը սկսէին հայ լեզուի վրայ բռնանալ ձուլելով հայ լեզուն յոյնին վրայ, որուն սկիզբը եղաւ իբր 490ին։ Լեզուի այս կրկին ոճերն հաւասարապէս կ'ընթանային նոյն դարուն մէջ, թէեւ անկախ իրարմէ, սակայն հարկը կը ստիպէր ի վերջոյ մօտենալ իրարու եւ գիրկընդխառն միանալ այնուհետեւ, ցորչափ որ իրարու հետ միշտ շփման մէջ էին, որուն իրականանալու սկիզբը կը տեսնենք արդէն Զ դարու վերջերն եւ մանաւանդ Է—Ը դարու մատենագրաց քով, որ ժամանակը շատ իրաւամբ կը կոչէ Հ. Մէնէվիշեան «յունական կամ խորենեան» դար։ Ասոր վկայ կեցած են Զ դարու ինքնագիր գրութիւններն. որոնք ազատ են հելլենաբան արատէ։ Արդ՝ Մ. Խորենացին, որ իւր Պատմութեան մէջ ինք զինքը Ե-ոս հելլենաբան ցուցուցած է, ինքնին կը հետեւի թէ Է դարէն յառաջ՝ թող թէ Ե. ոսկեղէնիկ դարուն, մատենագրած չէր կրնար ըլլալ։ Հ. Սարգիսեան իբրեւ աննշանակ փաստ առ ոչինչ համարելով Խորենացւոյ յետնութեան համար Հանդիսի մէջ (1903 էջ 222) յառաջ բերուած անհերքելի ապացոյցը, ի մէջ կը բերէ Դաւթի Անյաղթի եւ այլոց ժամանակն եւ ոճն, որոնք ըստ Յօդուածագրին թէեւ Ե դարուն գրուած, սակայն աւելի չոր լեզու գործածած են քան Խորենացին։

digitised by A.R.A.R.@